Մեծավանի N 1 միջնակարգ դպրոց

ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ս.Դուլմիկյան

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԴԱԿ՝ / / Դ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը:

2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:

3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը:

4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք,արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասղեկների հետ տարվող աշխատանք:

2.Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումների պլանավորում նկազմակերպում:

3.Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

4.Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

5.Աշխատանքներ երեխաների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով,ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ):

6.Աշխատանք ծնողական խորհրդի և ծնողական համայնքի հետ:

7.Աշխատանք սովորողների համակողմանի զարգացման ուղղությամբ.

ա. Հայեցի դաստիարակություն:

բ. Հոգևոր,գեղագիտական, բարոյական, ,քաղաքացիական դաստիարակություն:

գ. Ֆիզիկական դաստիարակության և առողջապահական միջոցառումներ:

8.Աշխատանք աշակերտական կոլեկտիվի հետ:

9.Աշխատանք հիմնական պարտադիր կրթության իրականացման ուղղությամբ:

10.Աշխատանք սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:

11.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ
1.	2022-2023 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներ. ա) դասասենյակները կահավորել, պաստառներ փակցնել, ներդպրոցական վերահսկողություն և հերթապահություն սահմանել բ) տոնական տեսքի բերել դասարանները գ) նախապատրաստվել առաջին զանգի արարողությանը դ) աշակերտներին հոգեբանորեն նոր պայմաններին պատրաստում	Օգոստոս-Սեպտեմբերի 1	ԴԱԿ, դասղեկներ
2.	Ստեղծել դասարանական անկյուններ	Սեպտեմբեր	ԴԱԿ, դասղեկներ,
3.	Կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները:	Պարբերաբար	ԴԱԿ, դասղեկներ,
4.	Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ	սեպտեմբեր	ԴԱԿ, դասղեկներ,
5.	Գրադարանավարի,դասղեկների հետ համատեղ կազմակերպել գրքերի,գրենական պիտույքների վիճակի ստուգում:	Մշտապես	Բուժքույր,ԴԱԿ, դասղեկներ,
6.	Սահմանել դասարանական հերթապահություն ,վերահսկել դասղեկների հետ համատեղ:	Ամեն օր	ԴԱԿ, դասղեկներ,
7.	Վերահսկողություն սահմանել ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմանբ, ժամանակին կանխել դրանք	Պարբերաբար	ԴԱԿ, Ուս.գծով փոխտնօրեն դասղեկներ
8.	Դաստիարակչական զրույցներ տանել պարբերաբար ուշացող և անհարգելի [illegible] սովորողների հետ:	Ընթացքում	ԴԱԿ, Դասղեկներ,

9.	Նպաստել հանրակրթության մրջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը:	Պարբերաբար	ԴԱԿ, դասղեկներ
10.	Մասնակցել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:	Մշտապես	ԴԱԿ, դասղեկներ
11.	Մասնակցել դասղեկի ժամերին և այն ծառայեցնել սովորողների բազմակողմանի դաստիարակության և առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին: Դասղեկական ժամերի մշտադիտարկում :	Պարբերաբար	ԴԱԿ, դասղեկներ
12.	Ապահովել հաստատության սովորողի և ընտանիքի սերտ կապը:	Պարբերաբար	ԴԱԿ, ԾԽ, դասղեկներ
13.	Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացաց պատանիներին և աղջիկներին դպրոց վերադարնելու ուղղությամբ	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ դասղեկներ
14.	Անհատական աշխատանք տանել դժվար դաստիարակվող սովորողների և նրանց ծնողների հետ	Մշտապես	ԴԱԿ, դասղեկներ,ուսուցչի
15.	Այցելել դժվար դաստիարակվող սովորողների,սոցիալապես անապահով սովորողների ընտանիքներ՝	Ըստ անհրաժեշտության	ԴԱԿ,դասղեկներ,
16.	Աջակցել սոցիալապես անապահով երեխաներին 1.1 Մշակել չափանիշներ՝ սոցիալապես անապահով երեխաներին բացահայտելու համար 1.2 Համագործակցել դասղեկների հետ և բացահայտել սոցիալապես անապահով երեխաներին	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
	Ծնողազուրկ երեխաների նկատմամբ մշակել հատուկ մոտեցում, այնպես նպատակներով օգնություն որ		ԴԱԿ, դասղեկներ

1.	Ծնողազուրկ երեխաների նկատմամբ մշակել հատուկ մոտեցում, այնպես կազմակերպել օգնությունը,որ չվիրավորվի սովորողի ինքնասիրությունը,մշտապես ներգրավել նրանց դպրոցական միջոցառումների,արշավների մեջ:	Պարբերաբար	ԴԱԿ, դասղեկներ

18.	Աշխատանք տանել սովորողների վարքի,կուլտուրայի,վարվոցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ	Մշտապես	ԴԱԿ,դասղեկներ,
19.	Անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում:	Մշտապես	ԴԱԿ, դասղեկներ
20.	Համագործակցել ծնողների հետ՝ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:	Մշտապես	ԴԱԿ, դասղեկներ
21.	Պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ ,ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:	Մշտապես	ԴԱԿ,տնօրինություն, աշխատակիցներ
22.	Բուժքրոջ օգնությամբ անցկացնել զրույց բոլոր դասարաններում օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի մասին:	Մշտապես	ԴԱԿ, բուժքույր, դասղեկներ
23.	Դպրոցի անցուդարձի լուսաբանում ֆեյսբուքյան պաշտոնական էջում:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ,ԱԽ,
24.	Կազմակերպել շաբաթօրյակներ դպրոցի շրջակայքը և շենքը մաքրելու համար /ըստ անհրաժեշտության/	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ,դասղեկներ
25.	Շարունակել կիրառել <<Առաջարկությունների արկղիկը>>	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ,դասղեկներ
26.	Դպրոցի հարակից այգու այգեգործական աշխատանքների կազմակերում (Ամառային այգու մաքրում, բերքահավաք)	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ,ԱԽ, կենսաբանության ուսուցիչ
27.	Օգնել ձևավորել դպրոցի ԱԽ-ը և ԾԽ-ը: Մշտապես համագործակցել ԱԽ-ի և ԾԽ-ի հետ: Աշակերտական խորհրդի և ծնողական խորհրդի աշխատանքների համատեղ պլանավորում և վերահսկում:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ,ԱԽ, ԾԽ

28.	Հանրակրթության աշակերտական խորհուրդ աշակերտ-ծնող, աշակերտ-աշակերտ հարաբերությունները: Նպաստել դպրոցի ծնողխորհրդի և աշակերտական խորհրդի համագործակցությանը:	Մշտապես	ԴԱԿ,ԱԽ,ԾԽ, դասղեկներ
29.	Բարձր դասարանի աշակերտներին բացատրել մարդկային բարոյական ու հոգևոր արժեքները,արժևորել պատմական անցյալի և ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
30.	Բացատրել անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթացը, որը նպատակաուղղված էգիտելիքներր պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, Դասղեկներ
31.	Աշակերտների մոտ առաջացնել հետաքրքրություն իրենց անձի նկատմամբ, և կատարելագործման ցանկություն:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
32.	Զարգացնել աշակերտների կամային հատկանիշները, ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողություն:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
33.	Գրադարանավարի հետ համատեղ կազմակերպել այցեր համայնքի գրադարան, Խնկո-Ապոր գրադարան:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, գրադարանավար
34.	Կազմակերպել հանդիպումներ տար բեր ԲՈՒՀ-երի և այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
35.	Վարք, վարվելակերպ, ամեն տեղ, ամենուր / այն ձևավորվում է ընտանիքում, դպրոցում, հասարակության մեջ և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքում/	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ,
36.	Անհատական աշխատանքներ կազմակերպել շնորհալի, ստեղծագործող աշակերտների հետ մասնակից դարձնելով ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
37.	Մասնակցել մեթոդմիավորումների նիստերին, սեմինարների, գործնական աշխատանքների, գիտաժողովների՝ կապված դաստիարակչական, սոցիալ-մանկավարժական խնդիրների հետ	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, Մ/Մ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հ/Հ	Աշխատանքի բովանդկությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ
37.	Կազմակերպել միջոցառումներ. Տոն և հիշարժան օրեր,վիկտորինաներ , հետաքրքրաշարժ մրցույթներ, մեծարման երեկոներ, ցուցահանդեսներ...	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ԱԽ,ԾԽ, դասղեկներ
38.	Կազմակերպել և անցկացնել սպորտային առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումներ ա/սպորտլանդիա բ/մրցավազք գ/հեծանվավազք դ/էքսկուրսիաներ	Ուստարվա ընթացքում	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ,ԴԱԿ ԱԽ,դասղեկներ զինղեկ
39.	<<Գիտելիքի,գրի և դպրության օր>> դպրոցում	Սեպտեմբերի 1	ԴԱԿ, Տնօրենություն, դասղեկներ
40	Տարեցների միջազգային օր.դասղեկների դասղեկական թեմատիկա	Հոկտեմբերի 1	Դասղեկներ,ԴԱԿ,
41.	Շնորհավո՛ր տոնդ, սիրելի՛ ուսուցիչ	Հոկտեմբերի 5	ԴԱԿ, ԱԽ,
42.	Գրադարանավարի օր ա/Ընթերցանության մրցույթ տարրական դպրոցի աշակերտների միջև բ/Ընթերցասեր աշակերտ	Հոկտեմբերի 7	ԴԱԿ, գրադարանավար, ԱԽ, դասղեկներ
43.	Քննարկում՝ <<Սովորողների իրավունքներն ու պարտականությունները>>	Ընթացքում	ԴԱԿ, դասվարներ

4.	Տեսահոլովակի պատրաստում՝ «Մարդու իրավունքների պահպանումը՝ հանուն համընդհանուր խաղաղության» թեմայով՝ նվիրված մարդու իրավունքների միջազգային օրվան:	Դեկտեմբեր	ԴԱԿ, ԱԽ, պատմության ուսուցիչ
45.	Սովորողների գիտելիքների հարստացում առողջապահությանն ուղղված թեմաներով. 1 Կազմակերպել ուսուցողական դասընթացներ, քննարկումներ <<Թմրամոլությունը և դրա հասցրած վնասը>> թեմայով անչափահասների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, խնամակալներ) իրազեկության բարձրացման ուղղությամբ: 1.1 Ապրիր իրականության մեջ և ոչ թե մղձավանջում 1.2Ծխախոտի ազդեցությունը առողջության վրա 1.3 Միջավայրի գործոնների ազդեցությունն օրգանիզմի զարգացման վրա	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, ոստիկանության անչափահասների գործերով աշխատակից, բուժքույր,ԱԽ
46.	<<Ես էլ քեզ նման եմ>> թեմայով զրույց	Ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
47.	<< Հաղթանակների ամիս>> խորոգրով միջոցառումների շարք	Մայիս	ԴԱԿ, Դասղեկներ
48.	<<Ընտանիքի օր>>	Մայիսի 15	ԴԱԿ, դասղեկներ
49.	Քննարկում `<<Ինչպիսի մասնագիտություն եմ ուզում ընտրել>> 10-12-րդ դասարաններում	Ընթացքում	ԴԱԿ, Դասղեկներ,ՈՒԱ գծով փոխտնօրեն
50.	Քննարկում՝ <<Ազգային զարթոնք>> թեմայի շուրջ	Ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
51.	Քննարկում `<<Պարկեշտությունը,կիրթ վարվելաձևը գեղեցկացնում է մարդուն>> թեմայի շուրջ	Ընթացքում	ԴԱԿ,դասղեկներ,
52.	Քննարկում <<Դեռահասների տարիքային առանձնահատկությունները>>	Ընթացքում	ԴԱԿ, Դասղեկներ

53	Քննարկում՝ գարնանային զբոսաշրջության բարեկամ>>	[illegible]	Դասղեկներ
54.	Քննարկում՝ <<Ես սիրում եմ իմ երկիրը>> թեմայի շուրջ 10-12-րդ դասարաններում	Մայիս	ԴԱԿ,Զինղեկ, պատմության ուսուցիչներ
55.	Արձանագրել դպրոցի հաջողությունները օլիմպիադաներում և արտադպրոցական մրցույթներում ա/Ամփոփել մրցույթներում ունեցած հաջողությունները բ/կազմակերպել և անցկացնել շնորհանդեսներ	Ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
56.	Շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ Դպրոցը՝ հանուն շրջակա միջավայրի ա/միջանցքների և աստիճանների հարակից պատերին ցուցադրել տարբեր աշխատանքներ. ... գեղանկարչական մրցույթի նկարներ, բնական և վերամշակված նյութերից պատրաստված արվեստի գործեր /օրինակ՝ պլաստիկ շշերից պատրաստված տարբեր աշխատանքներ, կտորից կարված էկո պայուսակներ և շատ ու շատ ձեռքի այլ աշխատանքներ	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ,
57.	Միջոցառում<<Հիշենք և նմանվենք հերոս, արծիվ, քաջարի մեր զինվորներին>> խորագրով	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, զինղեկ, դասղեկներ
58.	Կազմակերպել մրցույթ <<Կարգապահ դասարան>>, ներկայացնել ԱԽ-ի քննարկմանը, արձանագրել նվաճումները	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ, ԱԽ,

59.	Տեսահոլովակի պատրաստում,քննարկում՝ «Մարդու իրավունքների պահպանումը՝ հանուն համընդհանուր խաղաղության» թեմայով՝ նվիրված մարդու իրավունքների միջազգային օրվան:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ,ԱԽ, պատմության ուսուցիչներ,
60.	Կազմակերպել «Խոսքի հզորությունը» խորագրով միջոցառում:	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ

61	Տարեկան առնվազն երկու անգամ հրավիրել աշակերտական ըմդհամուր ժողով , ապահովել դպրոցի տնօրենի կամ նրա ներկլայացուցիչների մասնակցությունը	ՈՒս.տարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ
62	դասարաններում հրավիրել ժողովներ, անցկացնել դասարանական , աշակերտական խորհրդների ընտրություններ	Սեպտեմբեր	ԴԱԿ, դասղեկներ
63	Դպրոցում անցկացնել աշակերտական խորհրդի ընտրություն, ընտրել նախագահ, փոխնախագահ և նիստերի քարտուղար	Սեպտեմբեր	ԴԱԿ, ԱԽ
64	Աշխատանք տանել դասղեկների հետ,		ԴԱԿ, Դասղեկներ
65	Հետևել դասղեկական ժամերի իրականացմանը		ԴԱԿ. դասղեկներ

66	Դպրոցում ստեղծել 6 հանձնախումբ, ստեղծված հնաձնախմբերի աշխատանքները նպատակամղել աշակերտների ուսումնադաստիարակչ ական աշխատանքները լավագույն ձևով կազմակերպելու համար	Սեպտեմբեր	ԴԱԿ, ԱԽ
67	Անցկացնել աշակերտական խորհրդի հանձնախմբերի նիստ, յուրաքանչյուր հանձնախմբի նախագահին տալ անհատական հանձնարարականներ		ԴԱԿ
68	Ամիսը մեկ անցկացնել աշակերտական խորհրդի նիստ		ԴԱԿ
69	Դասարանական աշակերտական խորհրդի նախագահներին հնարավորինս ընդգրկել ԱԽ-ի կազմում	Սեպտեմբեր	ԴԱԿ
70	Իրականացնել նաև աշակերտական խորհրդի կանոնադրությունից բխող այլ լիազորություններ		ԴԱԿ
71	Ապահովել կապը սովորողների ծնողների հետ, համագործակցել երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործում		ԴԱԿ
72	Աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը		ԴԱԿ

3	Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը		ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ, փոխտնօրեն
74	Աշակերտներին ծանոթացնել ՀՀ կանոնադրությանը		ԴԱԿ, դասղեկներ. պատմության ուսուցիչներ
75	Աշխատանք տանել դժվար դաստիարակվող և անկարգապահ աշակերտների հետ		ԴԱԿ դասղեկներ
76	Դասղեկների հետ միասին հսկողություն սահմանել դպրոցում, որպեսզի այնտեղ կռիվներ, վեճեր, ծեծկռտուքներ չլինեն և իրավախախտման դեպքեր չգրանցվեն դպրոցում		ԴԱԿ, դասղեկներ
77	Հետևել դպրոցի ներքին կարգապահությանը		ԴԱԿ, դասղեկներ
78	Օգնել դասղեկներին կազմել դասղեկի տարեկան աշխատանքները		ԴԱԿ, դասղեկներ
79	Անցկացնել ծնողխորհրդի նիստեր		ԴԱԿ
80	Ընտրել ԾԽ-ի նախագահ, քարտուղար	Սեպտեմբեր	ԴԱԿ

Ուստարվա ընթացքում նախատեսում եմ կազմակերպել նաև այլ միջոցառումներ սովորողների,դասղեկների ,ԱԽ-ի,ԾԽ-ի նախաձեռնությամբ և աջակցությամբ: